ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 221/134 «27» նոյեմբերի 2019

ԵՊՀ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳՐԵՐՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով՝ ԵՊՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» և «Որակյալ մարդկային ռեսուրսներ» ռազմավարական նպատակներով, հրամայում եմ.

1. ԵՊՀ-ում իրականացվող թվով տասնչորս կրթական ծրագրերի համար (տե՛ս Հավելված 1) 2019-2020 ուստարում սահմանել դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջներ՝ ծրագրի կրթական վերջնարդյունքներին համապատասխան:

2. Սահմանել, որ.

   ա) Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանվում են որպես մասնագիտական ոլորտին անմիջականորեն չառնչվող կարողություններ, որոնք անհրաժեշտ են ծրագրի կրթական վերջնարդյունքներով սահմանված գիտելիքը, կարողությունները և հմտություններն ուսանողին արդյունավետ կերպով փոխանցելու համար:

   բ) Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանվում են որպես մասնագիտական ոլորտին անմիջականորեն առնչվող և ծրագրի կրթական վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, կարողություններ և հմտություններ, որոնց պետք է տիրապետի դասավանդողը:

   գ) Տվյալ կրթական ծրագրի ղեկավարը սահմանում է պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջները, որոնք հաստատում է ֆակուլտետի գիտական խորհուրդը:

դ) Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջները ներառվում են կրթական ծրագրի մասնագրում:

ե) Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջները 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակից ներառվելու են «ԵՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգում» և հաշվի են առնվելու ուսումնական բեռնվածության բաշխման գործընթացում:

զ) Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջները հիմք են ծառայում նրանց որակավորման բարձրացման ծրագրերն ուղղորդելու և հասցեական դարձնելու համար:

3. ԵՊՀ կրթական ծրագրերի մասնագրերում պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների սահմանման գործընթացն իրականացնել ըստ սահմանված ժամանակացույցի (տե՛ս Հավելված 2):

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Գ. Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

Թիվ	Կրթական ստորաբաժանում	Կրթական ծրագիր	Կրթական ծրագրի ղեկավար
1.	Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն	Սոցիալական մանկավարժություն	Ն. Հարությունյան
2.	Հայ բանասիրության ֆակուլտետ	Հայ գրականություն	Ս. Մուրադյան
3.	Ֆարմացիայի ինստիտուտ	Ֆարմացիա	Ա. Սաղյան
4.	Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ	1.Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն 2.Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա 3.Կառավարման հոգեբանություն	1. Ն. Խաչատրյան 2. Գ. Շահվերդյան 3. Հ. Ավանեսյան
5.	Ժուռնալիստիկայի ֆակուլտետ	Հասարակայնության հետ կապեր և հաղորդակցային տեխնոլոգիաներ	Ա. Ավետիսյան
6	Իրավագիտության ֆակուլտետ	Քրեական իրավունք և դատավարություն	Ա. Գաբուզյան
7.	Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոն	Եվրոպագիտություն	Ա. Ղազինյան
8.	Սոցիոլոգիայի ֆակուլտետ	Սոցոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն	Ա. Մկրտիչյան
9.	Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ	Ազգային անվտանգություն	Ա. Ենգոյան
10.	Կենսաբանության ֆակուլտետ	Կենսաբանություն	Մ. Փարսադանյան
11.	Պատմության ֆակուլտետ	Կովկասագիտություն	Հ. Մարգարյան
12.	Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ	Լեզու և գրականություն	Ս. Գասպարյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԵՊՀ կրթական ծրագրերի մասնագրերում պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ներկայացման ժամանակացույց

Թիվ	Գործողություն	Ժամկետ
1.	Հանդիպում-քննարկում կրթական ծրագրերի ղեկավարների հետ	02 դեկտեմբերի 2019 թ.
2.	Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների մշակման աշխատանքային խմբերի ստեղծում՝ 5 անդամ, այդ թվում՝ 1-ը՝ ֆակուլտետային ՈԱ հանձնաժողովից, 1-ը՝ մեթոդխորհուրդից և 1 ուսանող	03-10 դեկտեմբերի 2019 թ.
3.	Ֆակուլտետի գիտական խորհրդում տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին համապատասխան պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ցանկի կազմում և հաստատում	10-24 դեկտեմբերի 2019 թ.
4.	Պրոֆեսորադասախոսական համակազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական պահանջների ցանկի ներառում՝ համապատասխան կրթական ծրագրի մասնագրում	09-16 հունվարի 2020 թ.
5.	Վերանայված կրթական ծրագրի մասնագրի ներկայացում Որակի ապահովման կենտրոն	16-22 հունվարի 2020 թ.